ՀԱՆԳԻՍՏ

Տ. ԿԱՐԱՊԵՏԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ս. Աթոռոյս Միաբաններէն Դեր. Տ. Կարապետ Արք Եպիսկոպոսն, վեցամեայ ստաժանակիր հիւանդութենէ զկնի, փոխեցաւ առ Տէր յ9Ն նեղկայ Մայիսի 'ի հասակի 65 ամաց, 'ի թախծութիւն համակելով Միաբանական Ուխտս։

Օծումն և յուղարկաւորութիւնն կատարեցաւ վայելուչ հանդիսիւ, և ատենաբանութեամբ Ս. Պատրիարքի։ Յուղարկաւորութեան և թաղման հանդիսին ներկայ էին ոչ միայն Միաբանք և Հայազգի քաղաքացիք տեղւոյս, այլ և օտարազգիք և Յունաց ու Լատինաց վանուց թարգմանները պատկներով հանդերձ։ Հանգուցեալն մարմնոյն ամփոփեցաւ Սուրբ Փրկչի Եկեղեցւոյ գաւթին մէջ 'ի շարս Պատրիարքաց եւ Եպիսկոպոսաց։ Տ. Կարապետ Արք Եպիսկոպոսն Ս. Աթոռոյս բազմամեայ և աշխատաւոր Միաբաններէն էր։ Միաբանական Ուխտիս մէջ մնացեալ զկնի՝ բարձրացած է յաստիճան սարկաւագութեան, վարդապետութեան եւ եպիսկոպոսութեան։ Վարած է զանազան պաշտօններ, յորոց գլխաւորներն են՝ 'ի Պոլիս՝ Փոխանորդութեան պաշտօն, 'ի Մարաշ՝ քարոզութեան պաշտօն, 'ի Ս. Աթոռս Լուսաւորչաբանի, Խորհրդականի և Դպրոցի Տեսչի պաշտօն, և այս ամէն պաշտօնակատարութեանց մէջ միշտ հաւատարիմ գտնուած է և ջանադիր։

Հանգուցեալն աղօթասէր, ընթերցասէր և ուսումնասէր Միաբաններէն մին էր։ Ունէր սեպհական Գրադարան, զոր հետ զհետէ կը ճոխացնէր նորատիպ գրքերով։ Առանձական կենաց մէջ բարեկենցաղ էր եւ վարուք անբամբաս։ Այսպիսի Միաբանական անդամոյ մահն ցաւալի է անշուշտ, բայց Վերին Նախախնամութեան կամքն եւս պաշտելի է։

Ուստի կը մնայ մեզ միայն Աստուծոյ կամքն օրհնել և յաւիտենական երանութիւն մաղթել Հանգուցեալին։

digitised by A.R.A.R.@